

# ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՎՈՐՈՒՄԸ ՀՐԱՍ ՀԱԿՈԲՅԱՆԻ «ԷՇԵՐ ԳԱՎԱՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍԱԼՍԱՐԱՆԻ ԴԻՄԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ» ԳՐՔՈՒՄ

Հ. Գ. ՂԱԶՈՅԱՆ

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու,  
ԳՊԴ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան

Մարդուն բնորոշ է իր անցած ճանապարհը հետհայաց ինաստավորելու նղումը: Յրանտ խաչատրի Յակոբյանը համալսարանի հիմնադրման 10-րդ տարեդարձի առթիվ ամփոփեց կրթության ու գիտության ոլորտում իր կատարած գործը՝ հեղինակելով «Էշեր Գավառի պետական համալսարանի հիմնադրման պատմությունից» գիրք-հուշապատումը, որի մեջ նշվում է. «...ամբողջ կես դար աշխատելով մանկավարժական բնագավառում դպրոցում և բուհում, իրավունք ծեռած բերած կլիմեն սեփական տեսակետներ հայտնելու»<sup>1</sup>:

Մեզ հետաքրքրող տեսանկյունից կարևորվում է այն հարցը, թե համալսարանի հիմնադրման գաղափարը Յակոբյանի մոտ ինչպիսի արժեհամակարգի հիման վրա է ծագել: Ինչպես հեղինակն է հիշում «Ղերևա 1949 թ. «Դայոց պատմություն» առարկայի ընդունելության քննություն հանձննելիս՝ երկրորդ հարցը միջնադարի հայ մշակույթն էր: ... զգիտեմ ինչպես գլխումն ծագեց ժամանակի համար անհերթ միտք, միջին դարերում Գլածորում, Տաքսում, Գոշավանքում և այլուր կարող էին բացվել համալսարաններ, իսկ այժմ նոր Բայազետ քաղաքում ինչու՝ չպետք է հիմնադրվի համալսարան»<sup>2</sup>:

1960-ական թվականների վերջերից այդ գաղափարը գործնականում իրագործելու քայլեր է կատարում, բայց տարբեր պատճառներով այն իրագործել չի հաջողվում: Վերստին ծեռնարկված վճռական քայլերը 1993 թվականին պսակվում են հաջողությամբ: Պատմությունը կրկնվելու միտում ունի, և վերջին չորս դարի փորձը այդ է վկայում՝ դարավերջի տարիները միշտ եղել են շրջադարձային: Այդ ժամանակ հասարակությունը կանգնում է ճամփարաժնի վրա, և շրջադարձային ժամանակաշրջանում հատկապես կարևորվում է անհատի դերը: Ամենաբարդը շրջադարձային ժամանակներում ապրելն ու գործելն է, ճիշտ կողմնորշվելը, հատկապես հասուն տարիքում: Պատմությունն ու

<sup>1</sup> Հ. Խ. Յակոբյան, «Էշեր Գավառի պետական համալսարանի հիմնադրման պատմությունից», Եր., 2003 էջ 111:

<sup>2</sup> Տես նոյն տեղում, էջ 29:

փիլիսոփայությունը խորությամբ ուսումնասիրած Հրանտ Շակորյանը չխար-խափեց այդ իրադրության մեջ, դեռ ավելին՝ օգնեց հատկապես միջին և երի-տասարդ սերմորին, պարազարանելով, որ եղածը չարժե ընդունել իրու աղետ ու պատիժ, դա պարզապես ազդանշան է առ այն, որ զարգացման միջն այդ ե-ղած ուղին սպառել է իրեն և պետք է փնտրել, գտնել ու գնալ նոր ճանապար-հով, հակառակ դեպքում ինչպես բացատրել բացասաման բացասումի, կամ էլ ոփակում առաջարկական տրամաբանության մյուս օրենքների ինաստը: Այս առումով գրքի առանցքում այն տեսական կուր ու ամբողջական հայեցակարգն է որված, որ սոցիալ-տնտեսական ու քաղաքական տվյալ իրադրության մեջ մարտահրավերներին դիմակայելու առաջին գրավականը հենց կրթությունն է, սա է, որ համարվում է Մաշտոցյան ոգի, ասել է՝ տնտեսական ու մշակութային արժեքները կարելի է պահպանել կրթական համակարգով: Շակորյանը վա-ղուց էր նկատել, որ քաղաքում կրթությունը միշտ էլ արժենորվել է. «...հիմնադրաման օրից այստեղ բացվել են կրթօջախներ, որոնցում ուսանել են ոչ միայն տեղի, այլև շրջակա գյուղերի, հարակից շրջանների երեխանները»<sup>3</sup>: Շակորյա-նը հետապնդել է մի նապատակ՝ թույլ չտալ, որ իր հայրենի եզերքում տեղի ունենա նահանջ, որպիստև մեր տարածաշրջանը իրավամբ դեպի գիտելիքը ձգտող հանրության համբավ ուներ: Նա գիտեր, որ տնտեսությունը՝ արտադրությունն ու գյուղատնտեսությունը, ժամանակավորապես անկում ու ճգնա-ժամ կարող են ապրել, դա կրկնվող տնտեսական օրինաչափություն է, միշտեռ ահավորը մտքի ճգնաժամն է, ամենասարսափելին ու կործանարարը, որը սպառնում է վերածվել մտքի ամլության, ինչի ծանր հետևանքները երեմն անհնար է վերականգնել: Այդ առօսմով պրոֆեսոր Շակորյանն իր վրա վեցո-րեց տարածաշրջանում մտքի ճգնաժամը կամխելու ողջ պատասխանատ-վությունը: Շակորյանը համոզված էր, որ Շայասատանը գտնվելով Արևելքի ու Արևմուտքի հատման խաչմերուկում, այդ առավելությունից պետք է օգտվի՝ երկուսից էլ վերցնելով առաջավորն ու ընդունելին: Արևելքին բնորոշ է պար-տավորվածության զգացումը, նախնիների ավանդույթները պահպանելու ձգտումը: Շամալսարանի հիմնադրումից ուղիղ 90 տարի առաջ դարձյալ քա-ղաքական ու սոցիալ-տնտեսական ճգնաժամային իրավիճակում մեր նախնի-ները արևելյան մարդու պարտավորվածությանը համապատասխան հոգևորի հարատևությունն ապահովելու և ազգայինը պահպանելու նկատառումներով մի մեծ գործ էին կատարել՝ քաղաքի կենտրոնում կառուցելով հոյակապ եկե-ղեցի, և 90 տարի անց արևմտյան քաղաքակրթությանը հարիր կրթությունն ու

<sup>3</sup> Տես նույն տեղում, էջ 9:

գիտությունը, միտքն ու գաղափարը պահպանելու նպատակով անհրաժեշտ էր համարժեք ձեռնարկ, քանզի բարիք է ոչ միայն հավատքը պահպանելը, այլև մեծագույն բարիք է կրթությունն ընդհանրապես, բարձրագույն կրթությունը՝ մասնավորապես:

Երկու մեծ անհատ ժողովրդի համար բարիք գործեցին՝ մեկը տարածաշրջանի ամենակարճահասակ մարդը՝ Կոլոտ Յայրապետը՝ քաղաքի ամենացածրադիր վայրում կառուցել տվեց ամենաբարձր շինությունը՝ Եկեղեցին, ամրապնդելով հոգևոր տարածքի գոյությունը, իսկ 90 տարի անց տարածաշրջանի ամենաբարձրահասակ մարդը՝ Յրանտ Յակոբյանը, որին արքա էին անվանում, քաղաքի ամենաբարձրադիր վայրում իհմնադրեց համալսարանը՝ ամրապնդելով կրթական-գիտական, մշակութային տարածքը։ Հոգին փրկվեց ամայացումից ու ապականացումից, միտքը՝ ամլությունից։ Արձանագրվեց Երկու նշանավոր երևոյթ տարածաշրջանում դարասկզբին ու դարավերջին, Երկու կարևորագույն արժեք ազգապահպաննան գործում։ Տարածաշրջանի բնակչության դիպուկ բնորոշմամար՝ Յակոբյանն արքայավայել կեցվածքով, արդար խողով ու մաքուր ծեռքերով ստեղծեց համալսարան՝ ժողովրդի կողմից ամենաբարձր պարզեցի՝ օրինանքի արժանանալով։ Նա Եկավ հոգու քաղցր կանխելու և ամեն միջոց գործադրեց, որ Իսահակյանի գգուշացումը որքան հնարավոր է մեզանից հեռու վանենք, որ չքաղցենք ճոխ սեղանի շուրջ, դեռ ավելին՝ սեղանը զարդարենք բառ ու բանով, խոսք ու գրույցով։

Նշված գործը կատարելու համար իրեն անծնային հատկանիշներ անհրաժեշտ են հայրենասիրություն և սերնդասիրություն, սերունդներին գիտելիքների և սոցիալական առաջավոր փորձի փոխանցման անհրաժեշտության գիտակցում։ Վերջինս իրականությունն է դառնում Երկու սերնդի հանդիպման պարագայում։ Այդ նպատակի իրականացման վայր դարձավ Գավառի նորաստեղծ պետական համալսարանը։ Եվ բնավ պատահական չէ, որ համալսարանի պաշտոնական բացման օրը Յրանտ Յակոբյանը կազմակերպեց գիտագործնական կոնֆերանս՝ «Շրջանի և քաղաքի զարգացման հեռանկարները» խորագրով, որի ընթացքում անդրադարձ Եղավ նաև «Նոր Բայազետի կրթօջախների իհմնադրումն ու զարգացումը» թեմային։ Գավառի պետական համալսարանի հիմնադրումն ու զարգացումը» թեմային։ Գավառի պետական համալսարանի հիմնադրում գրքում անդրադարձ կա կարևոր ու խորքային մի երևոյթի, որը 1960-ական թվականների վերջերից մինչ օրս շրջանառվում է որպես Յայաստանի Յանրապետության տարօքների անհամաշափ զարգացում, կամ ամեն ինչ Երևանում կենտրոնացմելու միտում։ Յրանտ Յակոբյանին մտահոգում էր տարածքների անհամաշափ զարգացումը նաև կրթական տա-

րածքի առումով: Նա անձնական փորձով գիտեր, թե ինչ է նշանակում շփումը մտավորականության հետ, ուստի կրթական տարօքն արժևորում էր մտավորականության առկայությամբ, նրանց համալսարանական գործունեությամբ:

Հակոբյանի լեզվանատառողության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում «ուսումնատենչություն» հասկացությունը, որին գրքի էջերում բազմիցս ենք հանդիպում: Խոսքը թե՝ տարածաշրջանի, և թե՝ հայ ժողովորի մասին է ընդհանրապես: Այս առումով հետաքրքիր է մեջքերել օտարազգի հեղինակների կարծիքը. «Ոչ մի ժողովուրդ հույսներից լավ չգիտի ապահովել մանուկների ապագան կրթությամբ: Այս հարցում նրանց նախաձեռնությունը հավասարվում է մինչև անգամ հայերի նախաձեռնության հետ»<sup>4</sup>, - գրում է Էլիզե Ռեկլիին «Ուսաստանյան հայերը» աշխատության մեջ: Այս նկատառումը միանգամայն համահունչ է Հակոբյանի խոսքին ու գործին, հակոբյանական այն դիրքորոշմանը, որ կրթությունը որպես անծի ու հասարակության բնութագրի որակական ցուցանիշ, որպես հոգևոր արժեք ձեռք է բերում սոցիալական երևույթների գնահատման չափանիշնի նշանակություն:

Հակոբյանը աշխատության մեջ շեշտադրում է այն գաղափարը, որ կրթությունը ձեռք է բերվում ամենօրյա հետևողական, նպատականդված ու համար աշխատանքով, այսօրվա գործը վաղվան չքողմնելով: Կրթությունը շարունակական գործընթաց է, որում հակացուցված են ընդհատումներ, անհանդուրթելի է տեղատվությունը: Հիմնավորված ներկայացվում է այն գաղափարը, որ գիտելիքը կարևոր է բոլոր ժամանակներում, բոլոր սերունդների կողմից: 1990-ական թվականների սկզբներին այս գաղափարն ամրապնդելու անհրաժեշտություն էր առաջացել, քանզի կրթության կարևորության գաղափարի վերարձնորումը հին ու նոր հասարակարգերի, հին ու նոր արժեքների բախման իրավիճակում դառնում էր հրատապ:

Դրանու Հակոբյանը կրթությունը կարևորեց որպես հակասությունների լուծման միջոց, սոցիալական մշտական պահանջմունք ու արժեք, որպես անձի ու ազգի արժանապատիվ կյանքի երաշխիք:

**Բանալի բառեր – կրթություն, միտք, սերմահարություն, համալսարան, քաղաքակրթություն, բարիք, սոցիալական փորձ, մտավորական, հայրենասիրություն, կրթական տարածք**

<sup>4</sup> Էլիզե Ռեկլիի, Ուսաստանյան հայերը, 1896 թ.:

# **THE VALUE OF EDUCATION IN HRANT HAKOBYAN'S MEMORY BOOK “PAGES OF GSU FOUNDATION HISTORY”**

**H. G. GHATOYAN**

*Candidate of Philosophical Sciences,*

*Dean of GSU Faculty of Humanities*

This article aims to find out what kind of value system lies on the basis of the idea of the foundation.

Hakobyan was convinced that the economy, industry and agriculture will temporarily undergo collapse and crisis and it is a repetitive economic regularity, while the worst was the crisis of mind, which is the most terrible and destructive that threatens to turn into mind barrenness, with its severe consequences sometimes impossible to recover.

The article shows that professor Hakobyan undertook the responsibility of preventing the crisis of mind in the area by founding Gavar State University. H. KH. Hakobyan was deeply convinced that knowledge in general and higher education in particular are the greatest values. This idea was thoroughly analyzed in the article.

## **ОЦЕНКА ОБРАЗОВАНИЯ В МЕМУАРАХ ГРАНТА АКОПЯНА “СТРАНИЦЫ ИЗ ИСТОРИИ ОСНОВАНИЯ ГАВАРСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА”**

**Г. Г. КАДЖОЯН**

*Кандидат философских наук,*

*декан факультета гуманитарных специальностей ГГУ*

Цель статьи - ивыяснение системы ценностей лежащих в основе идеи основания университета. Акопян хорошо осознавал, что экономика, промышленность и сельское хозяйство могут пережить временный кризис и спад, это повторяющаяся экономическая закономерность, а между тем, страшенкризис мысли, самый ужасный и разрушающий, что грозит превратиться в бесплодие мысли, тяжелые последствия которого иногда невозможно восстановить.

В статье показано, что профессор Акопян, основав Гаварский государственный университет, взял на себя всю ответственность за предотвращение кризиса мысли в регионе. Подробно рассматривается идея о том, что образование есть величайшее благо, а высшее образование - тем более, в чем глубоко был убежден Г. Х. Акопян.